

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՆԱՅԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԸ
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռ. Ի. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Բագրատունյաց Հայաստանի պատմության ուսումնասիրության գլխավոր աղբյուրներից է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը»: Չնայած պատմիչը գործել է XI դարի վերջում—XII դարի առաջին կեսին, սակայն Հայաստանի X—XI դդ. արտաքին հարաբերությունների և ներքին կյանքի մի շարք հարցերի շուրջ նրա աշխատությունը պարունակում է կարևոր (երբեմն եզակի) տեղեկություններ և այդ հարցերի լուսաբանման համար պատմագիտությունը պարտական է Ուռհայեցուն¹:

Աշխատությունը բաժանված է երեք մասի կամ գրքի. առաջին գիրքը սկսվում է 952 թ. դեպքերի նկարագրությամբ և պարունակում է հարյուր տարվա պատմություն: Երկրորդը սկսվում է 1053 թ. դեպքերից և հասնում է մինչև 1102 թ., իսկ երրորդը ընդգրկում է 35 տարիների շրջան (1102—1137)²: Սույն հոդվածում ներկայացվող տարրնթերցումները վերաբերում են առաջին գրքին:

Առաջին գրքի նյութ հանդիսացող հարյուրամյա պատմությունը պատմիչը բաղել է նախորդ հեղինակներից և հին գրքերից: Այդ մասին նա գրում է. «Արդ մինչ ցայս վայրս բազմաչան և աշխատատր քննութեամբ գտեալ զրեցաք զշարագրական գրեալս զհարիւրից ամաց, զորս և բազում ժամանակաց հետաքրննեալ հասու եղաք: Ընդ այնքանեաց տեսողացն և լսողացն, որք էին ի հին ամաց ծնեալք, և ընդ ընթերցողսն յառաջին պատմագրացս, որք ականատեսք էին լեալք ամենայն եկելոցս և նեղութեանցս այսոցիկ...»³:

Մեջբերված հատվածը վկայում է, որ առաջին գրքի նյութը շարադրված է X—XI դդ. աղբյուրների հիման վրա⁴, ուստի Ուռհայեցու երկում 953—

1 Այդպիսիներից են Անին մարաբաղաբ հռչակելու մանրամասները, Չմշկիկ կայսեր արշավանքը Հայաստան 974 թ., գահակալական պայքարը Գագիկ I-ի որդիների միջև (1021 թ.), Վասպուրականի և Կարսի զավթումը Բուզանդիայի կողմից, զրվազնէր Տաշիր-Չորագետի պատմությունից, նրա վկայությունները Հայաստանի անիական շրջանի պետական կառուցվածքի մասին և այլն:

2 Տե՛ս Ն. Աճ առ յան. Մատթէոս Ուռհայեցի.—«Հանդես ամսօրյա», 1953, № 7—9, էջ 350 (նույնը՝ Բանասիրական ուսումնասիրություններ. Երևան, 1976, էջ 19): Մատթէոս Ուռհայեցի, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1973, էջ XI: Լ. Բաբայան. Դրվագներ Հայաստանի դարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության. Երևան, 1981, էջ 147—148: Սույն աշխատությունում նշված է Մատթէոս Ուռհայեցու մասին գրականությունը (տե՛ս էջ 371—373): Ն. Աճ առ յանը կատարել է բնագրի մանր սրբագրություններ (տե՛ս «Արարատ», 1913, էջ 1144—1150), նա քննել է Ուռհայեցու գործածած բազմաթիվ բառ-տերմիններ (տե՛ս Հայերեն նոր բառեր Մատթէոս Ուռհայեցու մեջ.—«Բազմավեպ», 1919, № 4, էջ 125, 126. № 5, էջ 149—151):

3 Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 112, Տե՛ս նաև 113, 114 էջերը:

4 Գիտությանը առ այսօր հայտնի է Ուռհայեցու աշխատության երկու աղբյուր, առաջինը՝ Հակոբ Սանահնեցու «Ժամանակագրությունն» է (տե՛ս Լ. Խաչիկյան. Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 22—48: Երկրորդը՝ Հովհան Կոզերնի «Տեսիլքն» է (տե՛ս Н. М а р р. Сказание о католикозе Петре и ученом Иоанне Козерне.—Восточные записки. СПб., 1895, с. 9—34). Բացառված չէ, որ Ուռհայեցու

1053 թթ. պատմական անցքերին վերաբերող հատվածը X դարում գրված սկզբնաղբյուրի արժեք ունի:

Ուսնայեցու աշխատութիւնը հրատարակվել է երկու անգամ՝ 1869 թ. (Երուսաղեմ) և 1898 թ. (Վաղարշապատ): Երկրորդ հրատարակութիւնը կատարվել է մի քանի ձեռագրերի հիման վրա: Սակայն Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուն ունի Ուսնայեցու մոտ 20 ձեռագիր, որոնք գրված են XVI—XIX դդ.: Ամենահին օրինակը գրված է 1582 թ. (ձեռագիր N 6686), որը պարունակում է աշխատութեան փոքր հատվածը: Ձեռագրերի մեծ մասը գրված է XVII դարում (9 ձեռագիր), 4 ձեռագիր՝ XVIII դարում, 4 ձեռագիր՝ XIX դարում:

Ձեռագիր օրինակներում X—XI դդ. Բագրատունիների պատմութեան վերաբերյալ հատվածներում կան այնպիսի տեղեկութիւններ, որոնք բացակայում են տպագիր օրինակներում: Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում «ամենայն սունն հայոց» արտահայտութիւն-տերմինը: Առաջին անգամ այն հանդիպում է 961 թ. Անիում Աշոտ III-ին թագավոր օծելուն վերաբերող հատվածում⁵: Մեր կարծիքով սույն տերմինն արտացոլում է Հայաստանի պետական կառուցվածքը մասնատվածութեան շրջանում (961—1045 թթ.):

«Ամենայն սունն հայոցը» առաջացել է հայ խոշոր ֆեոդալական տների միութիւնից, որը գլխավորում էին Բագրատունիները: Այդ միութիւնը (միջնադարյան ֆեոդերացիան) ձևավորվել է 950-ական թթ. վերջում, իսկ 961 թ. նորաստեղծ միութեան մայրաքաղաքը հաստատվել է Անիում, որտեղ այդ առթիվ կաղմակերպվել են հանդեսներ⁶:

Ի դեպ, Ուսնայեցու «Պատմութեան» տպագիր օրինակներում համապատասխան պարբերութիւնում ասված է, որ Անիում հանդիսութիւնները հրավիրվել էին այն ժամանակ, երբ Աշոտը «չեւ եւս էր նստեալ յաթոռ թագաւորու-

աղբյուրներից է նաև Հովհան Տարոնեցու աշխատութիւնը: Հովհանը ժամանակակից է եղել կաթողիկոս Պետրոս Գետաղարձին, որի պատվերով էլ գրել է իր երկը: Անկասկած, նա օգտվել է Անիի արքունի դիվանից: Հովհան Տարոնեցու «Պատմութիւնը», ցավոք, մեզ չի հասել, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանվել է այդ աշխատութեան սկզբի 8 թերթը, որից հետո միայն սկսվում էր Բագրատունաց պատմութեան շարադրանքը (տե՛ս ձեռ. № 1775, էջ 8 ր—16 ա): Աշխատութիւնը կոչվում է «Յոհաննու Տարոնացոյ, ըստ արժանեաց կոչեցեալ վարդապետի, աշակերտի երանելոյ վարդապետին Արշարունեացոյ. շարադրութիւն պատմութեան տանն Բագրատունեաց ի վերայ Հայաստանեայց, զոր արար հրամանաւ տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի...» (էջ 8 ր): Հովհան Տարոնեցու «Պատմութեան» մասին տեղեկացնում է նաև Մխիթար Այրիվանեցին (Պատմութիւն Հայոց. Մոսկվա, 1860, էջ 59) և «Պատմագիրք Հայոց»-ի հեղինակը (XVIII դարի սկիզբ), որը գրում է. «Յոհան Տարոնացի, որ է Պատմութիւն Բագրատունեաց» (ձեռագիրը հրատարակել է Ն. Ակինյանը. տե՛ս Վարդան Բաղիշեցի, առաջնորդ Ամիրտոյի վանքին.—ՔՀանդես ամսօրյա, 1952, № 1—3, էջ 55—59): Տարոնացու մասին տե՛ս նաև Գ. Աբգարյան. «Ալբերտի պատմութիւնը» և Անանունի առեղծվածը Երևան, 1965, էջ 128—130: Ն ու լ յ ն ի՝ Բանասիրական հետախուզումներ.—«Բանբեր Մատենադարանի», 1958. № 4, էջ 72—75: «Պատմագիրք Հայոց»-ի հեղինակի մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ: Տե՛ս Յ ու Վ ա ղ ա ն լ ա ն. «Պատմութիւն քաղաքին Յանուրանաքաղութեան հեղինակի և ժամանակի հարցի շուրջ.—Պատմա-բանասիրական հանդես», 1935, № 2, էջ 214:

5 Տե՛ս Մ ա տ թ է ռ ո ս Ու ս ն ա յ ե ց ի (1898), էջ 3,4: Երկրորդ անգամ տերմինը օգտագործվում է Գագիկ I-ի որդիների գահակալական պայքարին վերաբերող հատվածում (նույն տեղում, էջ 10), երրորդ անգամ՝ 974 թ. Աշոտ III-ի գլխավորած զորահավաքի մասին հատվածում (էջ 17):

6 Սանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Հայոց թագավորութեան պետական կառուցվածքն ըստ Մատթէոս Ուսնայեցու վկայութիւնների».—ՀՍՍՀ ԳԱ լրագրեր հաս. գիտ., 1980, № 8, էջ 66—72:

թեան տանն Հայոց»⁷: Սա վրիպակ է, 961 թ. Աշոտը պետք է գրավեր նորաստեղծ, բայց արդեն գոյություն ունեցող «ամենայն տանն Հայոց»-ի աթոռը: Չէր կարող պատահել, որ վերջինը ձեռավորվելու մի քանի օրում, Անիի հանդիսությունների ժամանակ: Տրամաբանական է ենթադրել, որ ձեռագիր օրինակում սկզբնապես գրված է եղել «չեւ եւս էր նստեալ յաթոռ թագաւորութեան ամենայն տանն Հայոց»: Եվ իրոք, Ուոհայեցու «Պատմության» ձեռագրերից մեկում (գրված 1709 թ.) համապատասխան նախադասությունը պարունակում է «ամենայն» (ամն) բառը⁸:

Դա հաստատում է, որ բնագրում սկզբնապես գրված է եղել «չեւ եւս էր նստեալ յաթոռ թագաւորութեան ամենայն տանն Հայոց», բայց հետագայում «ամն» բառը դուրս է մնացել արտադրողների մեղքով: Բացի այդ, նույն պարբերության մեջ տեղ է գտել ևս մեկ շեղում բնագրից: Սկստի ունենք այն նախադասությունը, որտեղ խոսվում է Անիում թագավոր օծվող անձի մասին: Տպագիր օրինակում այդ պարբերությունն ունի այսպիսի շարադրանք. «Յայսմ ամի ժողով արար զօրապետն Հայոց զմարդպետական գունդն քառասուն և հինգ հազար արանց քաջանց, զատ ի յարքունական գնդէն. և ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեան որդւոյն Աշոտի Գագկայ ըստ առաջին օծման հարցն իւրոց...»⁹: «...զօծումն թագաւորութեան որդւոյն Աշոտի Գագկայ» խոսքերից թվում է, թե օծվողը ոչ թե Աշոտն էր, այլ նրա որդի Գագիկը:

Սակայն ձեռագիր մի քանի օրինակներում այս պարբերությունն այլ տեսք ունի: Մի քանի ձեռագրերում գրված է. «Խնի (45 հազար) արանց քաջանց, զարդ յԱշոտոյ Գագկա, ի արքունական գնդէն...»¹⁰: Այս տարբերակում նախ չկա «որդի» բառը, ապա Աշոտի անունը (Աշոտ-Գագիկ ձևով) նշված է ոչ թե Անանիա կաթողիկոսի անունից հետո, ինչպես տպագիր օրինակում է, այլ պարբերության սկզբում՝ մարդպետական գնդի թվաքանակից հետո («զատ»-ի փոխարեն գրված է «զարդ»)՝¹¹: Բացի այդ, նույն ձեռագրերում մեզ հետաքրքրող պարբերությունից առաջ զետեղված է մեկ այլ պարբերություն, որը բացակայում է տպագիր երկու օրինակներում և մյուս ձեռագրերում: Բերում ենք այդ պարբերությունը. «Ի նԱ (952) թվականին նստաւ Աշոտ թագաւոր, որդի Աբասա ամս Իէ. Աշոտ որ Ողորմածն կոչիր, որդի Աբասա, որդւոյ Սմբատա, որդոյ Աշոտոյ, առաջին թագաւորութեանն Բագրատունեաց ազգին. յետ Աշոտա Սմբատ ամս ԺԳ ի թվին ՆԻԴ (975), և Գագիկ որդի Աշոտա, եղբայր Սմբատա, ամս ԻԴ, և ապա Յոհաննէս և Աշոտ ամս Ի»¹²:

Ձեռագրերի մյուս խմբի շարադրանքը կազմում է տպագիր օրինակի նշված պարբերության երկրորդ տարբերակը: Այդ տարբերակում Աշոտի անունը նըշված է Անանիա կաթողիկոսի անունից հետո, ինչպես և տպագիր օրինակներում, բայց չի ասված, թե Գագիկը Աշոտի որդին էր. «... և ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սբ հայրապետն Անանիա, վասն զի տացէն զօծումն թագաւորութեան Աշոտ Գագկայ...»¹³: Այդպես է գրված այդ նախադասությունը նաև Երուսաղեմյան հրատարակությունում¹⁴:

⁷ Մատթէոս Ուոհայեցի (1898), էջ 3: Պատմութիւն Մատթէոսի Ուոհայեցու. Յերուսաղեմ, 1869, էջ 3:

⁸ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 8232, էջ 51բ:

⁹ Մատթէոս Ուոհայեցի (1898), էջ 3:

¹⁰ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 1768, էջ 177բ. № 2899, էջ 2բ. № 3071, էջ 146բ. № 3519, էջ 193բ. № 5587, էջ 254բ. № 6605, էջ 2ա. № 1775 ձեռագրում, թ. 47-ում թագավորի անունը բաց է թողած:

¹¹ «Հարդ» է գրված նաև Երուսաղեմի տպագիր օրինակում՝ էջ 3:

¹² Տե՛ս ՄՄ, ձեռ. № 1768, էջ 177ա. № 2899, էջ 2ա. № 3071, էջ 146բ. № 3519, էջ 193ա. № 5587, էջ 254բ. № 6605, էջ 2ա:

¹³ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 1731, էջ 78ա. № 2644, էջ 3ա:

¹⁴ Տե՛ս Մատթէոս Ուոհայեցի (1869), էջ 3:

Մաշտոցի անվան Մատենադարանում Մատթեոս Ուոհայեցու «Պատմութեան» ձևագրերից միայն մեկում Աշոտ Ողորմածի օծմանը վերաբերող հատվածը շարադրված է ինչպես էջմիածնի 1898 թ. հրատարակությունում՝ «որդույն Աշոտի Գագկայ...»¹⁵:

Տպագիր երկու օրինակների 4-րդ էջում պատմվում է Աշոտ Ողորմածի օծման առթիվ կաղամկերպված հանդիսությունների մասին և այդ կապակցությամբ երկու անգամ հիշատակվում է թագավորի անունը: 1898 թ. հրատարակության մեջ մի դեպքում գրված է. «Եւ յայսմ ամի օծաւ որդի Աշոտի Գագիկ արքայ...», մյուս դեպքում՝ պարզապես «Գագիկ»։ «...լինէին ուրախ յաղագս քաջութեանն Գագկայ»:

1869 թ. հրատարակությունում հակառակը՝ առաջին անգամ թագավորի անունը նշված է Աշոտ. «Եւ յայսմ ամի օծաւ արքայ Աշոտ», իսկ երկրորդ անգամ՝ Գագիկ:

Մատենադարանի ձեռագիր օրինակներում համապատասխան հատվածում թագավորի անունը նշված է. առաջին դեպքում՝ Աշոտ, երկրորդում՝ Գագիկ (երկու ձևագրերում՝ Աշոտ-Գագիկ)¹⁶, իսկ ձեռագրերից մեկում գրված է «որդի Աշոտի Գագիկ»¹⁷:

Այս տարբերքումների կապակցությամբ պետք է ասել, որ 961 թ. Անիում որպես հայոց թագավոր օծվողի ճիշտ անունը Աշոտ է (իմա՝ Աշոտ III Ողորմած), այլ ոչ Գագիկ, իսկ «որդույն Աշոտի Գագկայ» ձևը շփոթության արդյունք է:

961 թ. Անիում կարող էր օծվել միայն Աշոտ III-ը, այլ ոչ թե նրա որդի Գագիկը¹⁸, և այդ փաստը ճիշտ նշված է Ուոհայեցու «Պատմութեան» մի խումբ ձեռագրերում, որոնցում առկա է պարբերության առաջին տարբերակը: Ընդ որում ինքը՝ Ուոհայեցին լավ զանազանում է նշված երկու անձնավորություններին, ինչպես երևում է տպագիր օրինակից դուրս մնացած այն պարբերությունից, որտեղ թվարկված են Բագրատունի հայ թագավորները՝ Աշոտ III-ից մինչև Հովհաննես և Աշոտ IV: Որ Աշոտ-Գագիկ ասելով Ուոհայեցին նկատի ունի Աշոտ III-ին, պարզ երևում է նաև նրանից, որ 974 թ. զորահավաքի առթիվ որպես հայոց թագավոր նա նշում է Աշոտ Ողորմածին¹⁹: Օրմանյանը ենթադրել է, թե Աշոտն ունեցել է երկրորդ՝ Գագիկ անունը²⁰, որը սակայն այլ աղբյուրներից հայտնի չէ:

15 ՏԵՍ ձեռ. № 1896, էջ 2ա:

16 ՏԵՍ ձեռ. № 1775, թ. 48. № 2899, էջ 2բ. № 3071, էջ 147ա. № 3519, 193բ. № 5587, էջ 255ա. № 6605, էջ 2բ:

17 ՏԵՍ ձեռ. № 1896, էջ 2ա:

18 961 թ. թագավորին օծող կաթողիկոսը Անանիա Մոկացի էր (աթոռակալել է 946—964 թթ.), իսկ նրան յամանակակից թագավորը կարող էր լինել Աշոտ Ողորմածը (953—977), այլ ոչ թե Գագիկը, որը թագավորել է 990-ից: Աշոտն է կառուցել Անիի փոքր պարիսպները (տե՛ս Վ արդ ան. Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. Վենետիկ, 1862, էջ 89), իսկ նրա հաջորդ Սմբատ II-ը շարունակել է պարսպապատումը (Ստեփանոսի Տարօնեցույ Ասողկան պատմութիւն տիեզերական. ՍՊԲ, 1885, էջ 137): Պարիսպների կառուցումը տեղի է ունեցել մինչև Գագիկի գահակալումը և վերջինին չի կարելի նույնացնել Ուոհայեցու հիշատակած Աշոտ-Գագիկին: Ետո՛ւ Կան նաև այլ բազմաթիվ տվյալներ, որոնք բացառում են այդպիսի նույնացումը:

19 Ձեռագիր մի քանի օրինակներում 974 թ. զորահավաքին վերաբերող հատվածից առաջ կա հետևյալ նախադասությունը. «Այս Աշոտ կացեալ թագաւոր ամս ի է և ապա Սմբատ շահնշահ ժԳ և Գագիկ իԹ»: ՏԵՍ ՄՄ, ձեռ. № 1768, էջ 133բ. № 1775, էջ 55ա. № 3071, էջ 151ա. № 5587, էջ 262ա. № 6607, էջ 7ա:

20 Մ. Օրմանյանը գրում է. «Աշոտ վերագիր անունով Աշոտ-Գագիկ ալ կոչված է». տե՛ս Աղգապատում. հ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1107: Առանձին դեպքերում Աշոտ-Գագիկ անվան պատճառով 961 թ. օծումը վերագրվել է Գագիկ I-ին. Մ. Պոլիս և ան. Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ. Երևան, 1956, էջ 178, 179: Սա-

Ձեռագիր մի քանի օրինակներում կարևոր տեղեկություններ կան նաև Կարսի թագավոր Աբասի մասին: Այս Աբասը Հովհաննես-Սմբատի և Աշոտ IV-ի եղբայրն էր և Կարսում թագավորական իշխանությունը ստացել էր իր հորից՝ Գագիկ I-ից (իշխել է 1020—1049 թթ.), սրան հաճախ շփոթում են Կարսի առաջին թագավոր Սուշեղի (961—984) որդի Աբասի հետ (984—990)²¹:

Ուռհայեցու տպագիր երկու օրինակներում համապատասխան պարբերությունը սկսվում է այսպես. «Յայնմ ժամանակի նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ՝ հրամանաւ ազգապետին իւրոյ Գագկայ Հայոց արքային...»²²: Սակայն մի քանի ձեռագիր օրինակներում այս պարբերությունը սկսվում է այլ նախադասությամբ. «Աբաս եղբայր էր Աշոտոյ և Յօհաննէս թագավորի»:

Յայնմ ժամանակին նստաւ Աբաս ի Կարս...»²³:

Բացի այդ, № 2768 ձեռագիրը պարունակում է հետևյալ տեղեկությունը. «Թագաւորն Յօհաննէս, Աբաս և Աշոտ եղբայրք էին: Եւ Գագիկ թագաւորն յԱնույ քաղաքին որդի Աշոտոյ. և Գագիկ որդի Աբասայ եղբօրորդիք էին»²⁴: Նախադասության վերջնամասում խոսքը Կարսի Աբաս թագավորի (Գագիկ I-ի որդու) հաջորդ Գագիկ II Կարսեցու մասին է (իշխել է Կարսում 1049—1065 թթ.)²⁵:

Ճշտման կարիք ունի նաև Ուռհայեցու երկի վերնագիրը: Ձեռագիր օրինակներից շատերը վերնագիր չունեն (№№ 1731, 1767, 1768, 1775, 2855, 3071, 3380, 3519, 3520, 6686, 8159, 8232): Մի քանի ձեռագրերում վերնագրերը ավելացված են հետագայում: Ձեռագիր № 2644-ում, թ. 1 (XIX դար) գրված է՝ «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ»: № 2899 (XIX դար)՝ «Պատմութիւն Մատթէոսի երիցու Ուռհայեցոյ» (թ. 1): № 5587 (XVII դար) այլ ձևերով գրված է՝ «Պատմութիւն արարեալ Մատթէոսի մեծի քահանայի» (էջ 253ա), կողքին ավելացված է. «Մատթէոս Ուռհայեցոյ ժամանակագրութիւն» (էջ 253ա): Ձեռագիր № 6605-ում (XIX դար) գրված է «Մատթէոսի պատմութիւն» (թ. 1): Բոլոր նշված վերնագրերը ավելացված են ուրիշների կողմից և Ուռհայեցու երկի ընդօրինակողների գրչին չեն պատկանում: Ձեռագրերից մեկը (№ 1896, թ. 1) ունի հետևյալ վերնագիրը՝ «Պատմագրութիւն արարեալ Մատթէոսի մեծի քահանայի Ուռհայեցոյ վասն Բագրատունեաց թագաւորացն եւ այլոց բազմաց ի ԴՃ թվականէն սկսեալ մինչ ի ՈժԱ թվական աւարտեալ»: Ձեռագիրը գրվել է (ընդօրինակվել է) 1689 թ. Ամրդուլու վանքում (գրիչ Հակոբ, ստացող՝ Վարդան Բաղիշեցի)²⁶:

Այս վերնագիրը 1898 թ. հրատարակությունում նախորդում է շարադրանքին, իսկ տիտղոսաթերթին գրված է. «Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն»: 1869 թ. Երուսաղեմի հրատարակության տիտղոսաթերթին գրված է. «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ», իսկ շարադրանքից առաջ ունի «Մատթէոսի Ուռհայեցոյ ժամանակագրութիւն» վերնագիրը:

1869 թ. հրատարակության երկու վերնագրերը համապատասխանում են ձեռագրերից մեկի²⁷ վերնագրերին (№ 5587, էջ 253ա, գրվել է 1617 թ. Լվո-

կայն հեղինակը հետագայում ուղղել է այդ վրիպակը. տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 2, Երևան, 1965, էջ 52:

21 Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1978, № 12, էջ 56, 57:

22 Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի (1869), էջ 11, 12: Մատթէոսս Ուռհայեցի (1898), էջ 10:

23 Տե՛ս ՄՄ, ձեռ. № 1768, էջ 180ա. № 3071, էջ 148բ. № 3519, էջ 195բ. № 5587, էջ 258ա. № 6605, էջ 4ա:

24 Ձեռ. № 1768, էջ 257բ:

25 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1978, № 12, էջ 57. 1979, № 4, էջ 83, 84:

26 Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի. հ. Ա, Երևան, 1965, էջ 669:

27 Տե՛ս նույն տեղում, հ. Բ, Երևան, 1970, էջ 139:

վում), զրված են շարագրանքից առաջ, սակայն չեն պատկանում ընդօրինակողի գրչին, այլ ավելացված են ավելի ուշ²⁸:

Առայժմ չենք կարող ճշտել, թե ո՞վ է ավելացրել «Ժամանակագրութիւն» բառը. Մատթեոս Ուռհայեցու երկին շատ ավելի համապատասխան է «Պատմագրութիւն վասն Բագրատունեաց և այլոց» վերնագիրը (№ 1896), որը ոչ թե ավելացված է հետագայում, այլ պատկանում է 1689 թ. ընդօրինակողի գրչին: Այդ վերնագիրը ավելի շիշտ է արտացոլում երկի բովանդակութունը (որը իրոք պատմութիւն է, այլ ոչ թե ժամանակագրութիւն) և, մեր կարծիքով, եթե չի ընդօրինակում XII դարի բնագրի վերնագիրը, համեմատն դեպս շատ ավելի մոտ է նրան, քան «Ժամանակագրութիւն»-ը:

Ուռհայեցու «Պատմութիւնը» պարունակում է նաև կարևոր տեղեկութիւններ վասպուրականում և Սեբաստիայում Արծրունիների իշխանութիւնի վերաբերյալ²⁹: Կան արժեքավոր տեղեկութիւններ XII դարի պատմութիւնից՝ հայկական իշխանութիւններ Կիլիկիայում, նրանց հարաբերութիւնները խաչակիրների հետ, տեղեկութիւններ Բյուզանդիայի և մահմեդական ամիրայութիւնների մասին³⁰: Չենք կասկածում, որ ձեռագիր օրինակներում կլինեն նաև այդ շրջանին վերաբերող վկայութիւններ, որոնք պակասում են տպագիր օրինակներում:

Մեր կարծիքով հասունացել է Ուռհայեցու աշխատութիւնի քննական հրատարակութիւնի հարցը: Եթե 1898 թ. հրատարակութիւնը իրագործվել է 6 ձեռագրերի համեմատութիւնով, ապա այժմ միայն Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի քանակը 3 անգամ գերազանցում է նախորդ հրատարակութիւնի համար հիմք հանդիսացած ձեռագրերի քանակին:

РАЗНОЧТЕНИЯ В «ИСТОРИИ» МАТТЕОСА УРҲАЕЦИ ОТНОСИТЕЛЬНО БАГРАТИДОВ

Р. И. МАТЕВОСЯН

Резюме

Одним из главных первоисточников по изучению истории Багратидской Армении X—XI вв. является сочинение Маттеоса Урһаеци (Эдесского), который жил в конце XI—первой половине XII вв. При изложении первой части сочинения, охватывающей период 952—1051 гг., Урһаеци пользовался работами авторов—современников событий, потому она ценна как первоисточник.

Изучение рукописей сочинения Урһаеци выявляет в них ценные сведения по ряду вопросов политической жизни страны X—XI вв., которые отсутствуют в печатных изданиях (1869, 1898). Одна из рукописей Матенадарана им. Маштоца (№ 1896, XVII в.) имеет заглавие, близкое к заглавию оригинала—«История священника Маттеоса Урһаеци о царях Багратидских и многих других».

По нашему мнению, назрела необходимость издания критического текста сочинения Маттеоса Урһаеци.

²⁸ Այս ձեռագիրը XIX դարում Կոստյ անպատի սեփականութիւնն էր, 1916 թ. բազմաթիվ այլ ձեռագրերի հետ բերվել է Վաղարշապատ. տե՛ս Օ. Եզանյան. Մատենադարանի ձեռագրական Դապարձուները.— Ցուցակ ձեռագրատ Մաշտոցի անվան Մատենադարանի. հ. Ա, էջ 95, 104:

²⁹ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 49, 55, 83, 88, 107, 133—135 (Սեբաստիա) 30, 31, 47—49, 90, 91 և հտ. (Վասպուրական):

³⁰ Մանրամասն տե՛ս է. Բաբայան. նշվ. աշխ., էջ 151—167: